

**Ինչպես Կազմակերպել Ձեր Երեխայի Արժևորումը Հատուկ Կրթական  
Ծառայությունների Համար**

Եթե գտնում եք, որ ձեր երեխան կարող է պայմանագրային լինել հատուկ կրթական ծառայությունների, հետևյալ քայլերը կարող են ձեզ օգնել, որ ձեռք բերեք անհրաժեշտ արժևորումը՝

1. Նամակ գրեք դպրոցի տնօրենին կամ հոգեբանին, խնդրելով, որ ձեր երեխան արժևորվի հատուկ կրթության համար: Նամակը կարող է մեքենագրված կամ ձեռագիր լինել, բայց պետք է ստորագրված և թվա-գրված լինի ձեր կողմից: Մասնավորեք՝ թե ըստ ձեզ որո՞նք են ձեր երեխայի դժվարությունները դպրոցում:

2. Նամակի պատճենը հանեք ձեր թղթա-ծրարի համար:

3. Նամակը հանձնեք ձեր երեխայի դպրոցի գրասենյակ: Գրասենյակի անձնակազմից խնդրեք կնքել նամակի և՛ բնօրինակը և՛ պատճենը՝ ստացման թվականը նշելով: Կամ կարող եք նամակը գրանցված փոստով ուղարկել, խնդրելով վերադարձվող ստացական:

4. Դպրոցական շրջանը պարտավոր է 15 օրից պատասխանել արժևորման ձեր խնդրանքին: (15 օրվա ժամկետը չի ընդ-գրկում ուսանողի սովորական դպրոցական սեփական արանքում ընկած օրերը կամ արձակուրդային օրերը, որոնք 5 դպրոցական օրից ավել են):

5. 15 օրերի ավարտին, դպրոցական շրջանը պարտավոր է ձեզ ներկայացնել արժևորման ծրագիր կամ չարժևորելու իրենց որոշման ծանուցագիրը: Արժևորման ձևը նշում է ձեր երեխայի ստուգվելիք

մարզերը և ձեր երեխայի հետ կատարվելիք հնարավոր ստուգումները: Դպրոցին չի թույլատրվում տնօրինել այդ ստուգումները՝ առանց այդ ձևը ստորագրելով ձեր լիազորությունը ընծայելու: Եթե դպրոցը մերժի արժևորել, ասելով, որ ձեր երեխան այնու-ամենայնիվ պայմանագրային չի լինի, պայման է, որ այդ որոշումը ձեզ գրավոր հայտնվի և ձեզ տրվի ձեր բողոքարկման իրավունքների պատճենը:

6. Եթե դպրոցին չհաջողվի մինչև 15 օրից գրավոր պատասխանել ձեզ, կարող եք՝

7. Դիմել դպրոցական շրջանի հատուկ կրթությունը համակարգողին և այդ անձին խմսցնել, որ ձեր գրավոր խնդրանքը մերժվել կամ անտեսվել է:

8. Եթե ձեր խնդրանքը անտեսվել է, գրավոր բողոքեք Կալիֆորնիայի Կրթական Բաժանմունքին (California Department of Education), Compliance Resolution Unit, 515 L Street, Suite 270, Sacramento, California 95814 (ՖԱՔՄ՝ 916-327-0326):

9. Եթե դպրոցական շրջանը գրավոր մերժի արժևորել ձեր երեխային, կարող եք ձեռնարկել միջնորդության կամ լսումի:

10. Կարող եք անկախ կրթական արժևորում ձեռք բերել, այն դպրոցին հանձնել և շրջանին ներկայացնել ծախսերի հաշվե-ցույցը, չնայած շրջաններից շատերը չեն վճարում արագ կամ առանց լրացուցիչ քայլերի դիմելու:

Արժևորման ծրագիրը ստորագրվելուց հետո, շրջանը պարտավոր է արժևորումը ամբողջացնել 60 օրից: Ամբողջացվելուց հետո, դպրոցի ներկայացուցիչները և ծնողը կհանդիպեն, որպեսզի գրեն անհատականացված կրթական ծրագիրը ("IEP"), եթե ուսանողը պայմանագրային է: Եթե ուսանողը պայմանագրային չէ, ծնողներին խորհուրդ պետք է տրվի իրենց իրավունքների մասին, որպեսզի բողոքարկեն ծառայությունների մերժումը:

Թարգմանական նյութամիջոցները Հոգեկան Աողջության Պաշտպանության Ծառայությունների, Ընկ-ից հայթայթել է Կալիֆորնիայի Նահանգային Իրավաբանական Խմբի Հաստատությունը:

*Mental Health Advocacy Services, Inc.*  
3255 Wilshire Blvd., Suite 902  
Los Angeles, CA 90010  
213-389-2077